


Ի ՄԻՈՒԹԵԱՆ ԿԵԱՆՔ ՀԱՅՐԵՆԻ



ԲՆԱԹԵԱՆ օրէնք է, երկու հակառակամարտ հաւասար ուժեր զիրար կը չէզոքացնեն: Նոյն բանը կը պատահի և բարոյական և քաղաքական աշխարհի մէջ: Զոր օրինակ, խօսելով զինադազարի շրջանի սկիզբէն, մենք ունեցանք երկու ազգային անշատ Պատուիրակութիւններ Պարիսու խաղաղութեան Գերագոյն խորհրդոյ մօտ, որպէս զի Միացեալ և անկախ Հայաստանի դատը պաշտպանէին, մեզի շահաւոր դաշինք մը կնքելու համար: Բայց այդ երկու հաւասար ուժերն երբեք համախոհութեան չեկան և Հայաստանի հարցն առկախ և թերի մնաց, թերեւ և փաստներ կրեցինք այդ անմիաբանութեան երեսէն: Անձուկը սրտերնիս կարդացինք և ունկնդրեցինք երկու կողմէն հնչուած զանգակներու ձայնին: չփոթած մենք մեզի հարց տուինք. Ինչ է այս չփոթութիւնը, ուստի՞ է այս տարաձայնութիւնը, մէկն իբրև պղինձ կը հնչէ, միւսն իբրև ծնծղայ կը զողանջէ. անկերպաշնակ համբըք մը. պատճառը. որովհետև Սէբէ, որ է զօդ կատարման՝ կը պակտի մէջերնին: Տարաձայնութեան հետեանքը կործանումն է և ոչ շինութիւն: Եթէ մեր սրտի կսկիծը գրի վրայ առնուլ կը փորձենք, յաւակնութիւն չունինք իրաց դրութիւնը կերպարանափոխելու, այլ ինչպէս փաստոտ Բուզանդ կը գրէ. «Իբրև աղիւս մի կարգած ի մէջ որմոյն». իբրև կակուղ մածուցիկ մը հերձեալ սըրտեր միացնելու, ինչպէս որ պատի ամբուսթիւնը կապահովէ կակուղ շաղախն ընդ մէջ քարի և քարի, պապ թէ ոչ՝ Պիկոյ ընդ պնդի ոչ պատանդի. Duro con duro non si fa buon muro.

* *

Լաւագոյնի անյազ տենջով, Արարատեան Հանրապետութիւնը Մայիս 28ին, ինքնիշխան յայտարարութեամբ՝ ծանոց Հայ Ազգին իբրև իսկական վարչութիւն Միացեալ և անկախ Հայաստանի: Այդ պաշտօնական Արարքը անսպասելի ցնցումն յառաջ բերաւ Ազգին մէջ և բացաւ ճեղքուած մը Հայ սրտի մէջ, որ մինչև ցայսօր իբրև անըտնելի խոց մը կը մնայ:

Վէրքի գլխաւոր պատճառը, ինչպէս կը թուի

մեր տկար տեսութեան, ոչ էթէ Հանրապետութեան առած քայլն է, որ համապատասխան էր հանրութեան զաղափարին, յենլու մի ԻՐԱԿԱՆ իշխանութեան և վարչութեան վրայ, Միացեալ և անկախ Հայաստանի իրաւունքները պահանջելու և ճանչցնել տալու խաղաղութեան Գերագոյն խորհուրդին մէջ, այլ անոր համար որ, Հանրապետութեան վարչութիւնն կամ Դաշնակցական Կուսակցութիւնը իւր ձեռքի մէջ ամիսփեց Գիտական պաշտօնէութիւններն և բացառիկ դիրք մը բռնեց հանդէպ միւս Ռաւմակայ կուսակցութեանց և մանաւանդ Հայ Ազգային Պատուիրակութեան Պարիսու:

Տասնեակ տարիներ զինուորական ոգով սնած և մարզուած մարքեր, հազիւ թէ ուղենային համակերպիլ նուր քաղաքականութեան խոհմ գործելակերպին հետ: Նոքա ազատութիւնը ձեռք բերած էին թրի ուժով, նոյնը պահպանելու համար պէտք կը զգային հրամայողական ուժի կառավարութեանը: Սակայն Հանրապետութեան տաղանքաւոր վարիներն պէտք էր իրենց զբաղոյն նպատակին հասնելու համար՝ խոհմութիւնը, համերաշխութիւնը նախընտրէին, քան ուժեղի իրաւունքով հրապարակ նետուէին:

Հանրապետութեան Արարքի ձեւը, առանց համախոհութեան և հաւանութեան Հայ Ազգային Պատուիրակութեան, անոնք գիտէին անշուշտ թէ անախորժ հետեանքներ և ընդհարումներ պիտի ունենար գործադրութեան մէջ:

Նա ծանր վերաւորանք մ'եղաւ այն Հեղինակութեան, որ բոլոր Ազգի համար հաստատուած էր Հայաստանացի Հայրապետի իշխանութեամբ, որ դարերով ազգի գլուխը համարուած և ընդուսնուած աշխարհի մէջ, և այդ ազգային Պատուիրակութիւնն չորս տարիներէ ի վեր կը գործէր Դաշնակից պետութեանց մօտ: Վերաւորանք մը ազգիս այն հատուածին որ չորս աղէկոծ տարիներու մէջ խմբուած Հայ ազգային Պատուիրակութեան շուրջը, կը կազմէին բարոյական իրաւասու մարմին մը, որ յանուն իրաւունքի և արդարութեան կը պահանջէր Դաշնակիցներէն Հայրական գաւառներն անշատուսն թուրքի լծէն, որք բնականօրէն պիտի միանային Արարատեան

Հանրապետութեան հետ քանի որ դա ԻՐԱԱԿԱՆ գոյութիւն ունէր:

Հայ Ազգային Պատուիրակութիւնը՝ արհաւիրակներէ քանակութիւն կամ հեղինակութիւն մը չէր, և Հանրապետականները չէին կարող անգիտանալ: Մինչև 1914 Յուլիսի 29, Հայկական շարքը, Ազգիս և յեղափոխական կուսակցութիւններու հասկացողութեամբ, Տաճկահայաստանի ինքնավարութեան կամ ճիշտն ասելով «Բարենորոգութեան» ինդիւիդներն էին: Ռուսահայերն իրենց անկախութեան մասին, թերեւս մտածած չլլլան երբէք. կառավարչական զբոսարարութիւններն անոնց անշատուելու ձգտումներու մասին անհիմն էին, ինչպէս ապացուցին ներկայ պատերազմի դէպքերն: Ուրեմն Եւրոպական Դիախնագիտութեան առջև Հայի դատը պաշտպանողներն արտասահմանի հայերն էին, որոց զուգահեռ անոնց անշատուելու ձգտումները: Հա պարագայի միակ մարդն էր, համազգային կերպարանքով: Ամենայն Հայոց կաթողիկոսն, Տաճկահայոց աղիողորմ կացութիւնն պաշտպանելու համար՝ նշանակեց իւր ներկայացուցիչը Համաձայնական Պետութեանց մօտ: Այդ ընտրութիւնը հաստատակց հաւանութեան արժանացաւ, և Հայ յեղափոխական կուսակցութիւններն, ոչ մի ըմբոստացումն ցոյց չտուին այդ ընտրութեան դէմ, որովհետև փորձուած էր վսեմ Պ. Դուպարի ազգասիրութիւնը, հայրենասիրութիւնը և անձնանուէր շանքերը Տաճկահայոց հարցը յաջողցնելու համար:

Հայոց շարժերու, տեղահանութեանց, ամենազգի ոճրագործութեանց դէմ բողոքողն եղաւ վսեմ Պ. Դուպար. ամենքի աչքերն անոր վրայ ուղղուած էին: Կը յիշե՞ն արդեօք հայրենասէր յեղափոխական ընկերավարական կուսակցութիւններն, թէ իրենք ալ պէտքը զգացած ըլլան դիմելու այդ հեղինակաւոր Հաստատութեան Հայրենիքի հրատապ կարիքներուն հասնելու համար: Ռուսաստանի Հայերն այդ ժամանակ մի միայն բազմաթիւ ունէին, Ռուսական զենքի յաղթութիւնը: Հայաստանի ամբողջական գրաւումով, ազգերնիս կը միանար բարեկարգ իշխանութեան ձեռքի տակ և հնարաւորութիւն կ'ունենար բազմանալու և հայրենի հողին տիրանալու ընակութեամբ և մշակութեամբ:

Եթէ այս ծրագիրն յաջողէր, ինչպէս կը յուսացուէր, առանց իսկ գիտնալու 1916ի գազտնի դաշնագրութիւնը, արդեօք Հայ Ազգային Պատուիրակութիւնը ի՞նչ դեր պիտի կատարէր Խաղաղութեան Վերագոյն Խորհրդով մէջ: Հա միայն

պիտի հանդիսանար պարտուած Թուրքի դէմ բողոքաւոր հեղինակութիւնը. և պիտի պաշտպանէր Հայ ժողովուրդի դատը, որպէս զի լաւագոյն պայմաններով տաղաւարէին Ռուս կայսերութեան սահմաններու մէջ:

Եթէ Բրեստ-Լիտովսկի դաշնագրութիւնը կերպարանափոխ ըրաւ Ռուսիոյ երկիրը, և յոտին կանգնեցաւ Հայկական Հանրապետութիւնը, սաւային Թուրքիոյ վիճակը փոքր ի շատէ մնաց նոյն, և դարձեալ հին դիախնագիտութիւնը սկսաւ գործել ի զստ Հայուն. ուրեմն Հայ Ազգային Պատուիրակութեան դերը և գործը աւարտած չէր. հետեւապէս Արարատեան Հանրապետութիւնը Մայիս 28ի Արարքը հրատարակած ժամանակ, պէտք էր իւր կողքին ունենար Պարսիսու Հայ Ազգային պատուիրակութիւնը իւր բոլոր կազմով, անով նովին իսկ գործով: Հայ ազգը ունեցած կ'ըլլար իւր իսկական Միացաւ Հայաստանի Ազատ և անկախ Հանրապետութիւնը:

Ոչ ոք կրնայ անգիտանալ, մասնաւորապէս Գաշնակցական կուսակցութեան արժանիքը Հայրենիքի ռազմագրութեան գործի մէջ. անոնք քաջ կոռուդներ են, անձնանուէր գործիչներ, լաւ կազմակերպողներ, (գիտենք նաև գեղծուները, եթէ ուրիշ ազգերու մէջ եղած են կամ կան աւելի անմեղներ, թող անոնք նախ քան ձգեն Հայ յեղափոխական ընկերներուն): Չեղծուները միշտ դատապարտելի են. և զովելի բարենախանձ Գլուխները շանքերը արմատախիլ ընելու գաւնոնք Հայ հողի միջէն:

Բայց քաջ գիտնորը, և՛ քաջ քաղաքագէտ չի կրնար ըլլալ. հազուադիւսէ երկուքի ի միասին պատահումն: Չիտնորը հանգոյցներու հանդիպած պահուծ, սուրը կը հանէ և կը կտրէ զայն. ամեն ոք Աղեքսանդր չի լինիր: Բայց և անոր թագաւորութիւնը տասն և երկու տարի տևեց: Իսկ երբ ժողովուրդն կամ ծերակոյտն կը նստի, կը խորհի և կը լուծէ կնիւնները, անոր տէրութիւնն և իշխանութիւնը դարբնով կը տէն: Հա ազատ և ինքնիշխան կ'ապրի իւր երկրի մէջ, և տիրապետութիւնը կը տարածէ ուրիշ ազգերու վրայ: Այսպէս եղան հին Եգիպտացիք, Հռոմէացիք և նաև Վենետիկեան Հասարակապետութիւնը: Պատմութենէն շատ բան սովբելիք ունինք: Ուստի Հանրապետութեան քաջ գիտնորներն, իրենց զենքով շահած դափնիներն, նեղ կուսակցական պայքարներով պէտք չէ նսեմացընեն, այլ ապէս է ուզեն յարգել ազգիս մեծ հատուածին կարծիքները և հանաչել իրենց պէս քաջարի և հայրենասէր անձինքներու արդիւնքը

և իրաւունքը: Պէտք է համոզուիլ՝ որ ազգ մը գերազանցապէս պահպանողական, ինչպէս Հայն է, միանգամայն չի կրնար մարսել, իւրացնել եւ թողալի և Ամերիկայի յառաջացած և ծայրայեղ սկզբունքները, գաղափարները, Արուեստական միջոցներով ալ ծաղկկեն և պտուղներ կը հասցնեն շերմանոցներու մէջ, սակայն անոնք բնութեան անհարգատ արդիւնք են: Ազգ մը ժամանակի ընթացքի հետ բնաշրջման օրէնքով կը յառաջադիմէ կը զարգանայ. կենսքի փորձէն անցնելով ձեռք կը բերէ Արուեստին մը վարձելու կորովն և իմաստութիւնը: Հայկական Հանրապետութիւնը իրաւախոհութեամբ զուգէ աւելի շուտ կը յաշոյցներ Միութեան գործը:

* *

Որպէս զի յօդս խօսած չլլանք, կը հրաւիրենք ընթերցողը ականջ դնել այն գաղափարներին, որ Հանրապետութեան էրեսփոխանական դաշինքի մէջ կը հնչեցնեն մի քանի Պաշտակցական պատգամաւորներ: Հոն կը լսես որ հրամայողական եղանակով կը զգացնեն (ոչ միայն խելաւորը խմբակներու) ալ ևս լուրը այսպէս կոչուած Ժողովրդական Ռամկավար կուսակցութեանց, թէ ներկայապէս Հանրապետութեան վարչութիւնը, Պաշտակցականներու ձեռքէն երբեք չպիտի անցնի հակառակ կուսակցութեան մը ձեռք: «Հակառամարտի» մէջ կարդացած, նիս, այս անախորժ տպաւորութիւնը թողուց մեր վրայ: Այս սպառնալիքը թերեւ ներքի ըլլաւ պարտուած թշնամոյ դէմ, ոչ համարին եղբայր, ներքի, որոնք հաւասարապէս արեան ծովէն անցան ազատ Հայրենիք մը ունենալու համար:

Մենք կը սիրենք յուսալ որ այսպիսի մարդատեսաց գաղափարներ, սակաւներ ունին, որու որոնք փաստակար լինել Հայրենիքին չեն իմա, նար, խրամատելով ազգային Միութեան շէնքը: Այն օրինաւոր Տէրութեան մէջ, (բաց ի բար, բարոս թուրքն) ներքի է որ երկրի վարչութիւնն պատկանի բացարձակ մի ուր և է կուսակցութեան. ամենքն պէտք է մասնակցին հաւասար իրաւունքներով երկրի մը վարչութեանը, որ նուիրուած լինին Հայրենիքին, ընդհանրապէս առանց խտրութեան, առանց համակրութեան և հակակրութեան, և կոչուելու են պաշտօնի այն անձինքը որ անվիճելի կերպով կրնան օգտակար լինել իրենց երկրին, իրենց ազգին: Եթէ այս օրինակ համերաշխ և ընկեն, բահալտ ոգի մը շտիրէ Հայկական Հանրապետութեան խորհրդարանի մէջ, ոչ ցանկալի յաշոյցներով կարողող սպարապետն իտալիոյ սահմաններուն մօտեցած ժամանակ և ոչ իրենց ուզած տեղը ցցել նիզակը և պատասխանել իրենց եղբայրներուն. Սահմանք քաջաց զէնք իւրեանց: Թող յիշեն մեր հայրենակիցներն, Պարթալիքի և ընկերներու փառքի նախնաձորներն, ինչպէս նոքա դիցազնացան իտալիոյ անկախութեան կոիւներու մէջ, բայց մեծ Հերոսը և ընկերներն, երբեք վիճկորդ էմանուէլի և Վալուրի վարչութեան հակառակ ոտնձգութիւններ և ճշմունքը ջանեցնան իւր ևս ազգային արժեքները մեջ: Անոնց յանձն առած պարտականութիւնն էր թշնամին տեսնալ և յաղթել, պարտատուազամ հպատակելու Ազգային վարչութեան սահմանադրութեանը, յորում կը մասնակցէին անխտր իտալիոյ հայրենասէր որդիքը, ամեն դասակարգէ. և ոչ միայն Պիէմոնտեցիք, որոնք գլուխ կանգնած էին ազգային շարժման և անկախութեան գործին:

տութեան խորհրդարանի մէջ, ոչ ցանկալի յաշոյցներով կարելի է յուսալ և ոչ երկարատե խաղաղութիւն:

Հոռոմական Հասարակապետութիւնը օրէնք դրած էր որ պատերազմէն դարձող սպարապետն իտալիոյ սահմաններուն մօտեցած ժամանակ պարտաւորեալ էր արձակել լէգէոնները, յետոյ մտնել իտալիա, ապա թէ ոչ ապստամբ կը համարուէր և թշնամի հայրենեաց: Այս օրէնքը վերաբերելով Հանրապետութեան սպարապետներուն՝ զինազարդէն յետոյ, երբ հնարաւոր եղաւ հաղորդակցութիւն հաստատել Հայ Ազգային Պատուիրակութեան հետ և երկու հատուածի միութիւնն անհրաժեշտ եղաւ, այնուհետեւ մեր յաղթական լէգէոններն ալ պէտք էր զենքերը վար դնէին Ազգային Միութեան և համերաշխութեան կենսական խնդրոյն սահմաններուն մօտեցած ժամանակ և ոչ իրենց ուզած տեղը ցցել նիզակը և պատասխանել իրենց եղբայրներուն. Սահմանք քաջաց զէնք իւրեանց: Թող յիշեն մեր հայրենակիցներն, Պարթալիքի և ընկերներու փառքի նախնաձորներն, ինչպէս նոքա դիցազնացան իտալիոյ անկախութեան կոիւներու մէջ, բայց մեծ Հերոսը և ընկերներն, երբեք վիճկորդ էմանուէլի և Վալուրի վարչութեան հակառակ ոտնձգութիւններ և ճշմունքը ջանեցնան իւր ևս ազգային արժեքները մեջ: Անոնց յանձն առած պարտականութիւնն էր թշնամին տեսնալ և յաղթել, պարտատուազամ հպատակելու Ազգային վարչութեան սահմանադրութեանը, յորում կը մասնակցէին անխտր իտալիոյ հայրենասէր որդիքը, ամեն դասակարգէ. և ոչ միայն Պիէմոնտեցիք, որոնք գլուխ կանգնած էին ազգային շարժման և անկախութեան գործին:

Հայկական խորհրդարանի պատկառելի Ակումբը, կը մտածենք, շատ մեծ է փրկարար գործ մ'իւ հարաւարած կը լինի, եթէ ամբէն իսկ, առանց վերապահումներու՝ Հայ Ազգային Պատուիրակութեան հետ համախոհութեան գայ և կազմէ Միացեալ Հայաստանի խորհրդարանը: Հայրենիքի և Ազգի գերագոյն սէըը պէտք է ստիպէ զորեւ անձնական շահին, և յարգել իրենց եղբայրների իրաւացի պահանջները: Ուրիշ անգամ ալ յորդոր մը կարգադիրք մեր հայրենակիցներուն, Հայկական վարչութեան մէջ մտցնելու անհրաժեշտութիւնը Հայուհեան պատիւ և օգուտ բերող անձնաւորութիւնը: Եւ ո՞վ անելի երակործի և արժանաւորութիւն ունի քան վսեմ. Պ. Պապար, որ հանրածանօթ քաղաքագէտի համբաւը կը վայելէ մեծ ազգերու կառավարութեանց մօտ.

կամ Տիրայր Գ. Նորատունկեան՝ նոյնպէս Եւրոպական դիւանագիտութեան ծանօթ և յարգուած անձնաւորութիւն մը, լռելով ուրիշ շատ մէջ արժանաւորաց անունները: Հայաստանը ամենքի մայրն է, անոր որդիքը հաւասար իրաւունքով մօր ժառանգութեան պէտք է մասնակցին. ամենքն պէտք է աշխատին անոր անունը, համբաւը, փառքը բարձրացնելու: Եղբայր յեղօրէ՛ օգնեալ, իբրև զքաղաք ամուր:

* *

Հայ Ազգային Պատուիրակութեան Երևան դրկած երկու լիազօրներու բանագնացութեան անյաջող փորձէն վերջը, Պարոն Սամսոն Յաւուրթեանի և Պարոն Սիմոն Վրացեանի տուած լուսաբանութեանց մասին, կ'ուզենք նուիրել երկու խօսք, ըստ մեր տկար դատողութեան, ճշտելու համար թէ երկուքէն մին աւելի համոզիչ է:

Թէպէտ այս բանագնացութեան մասին շատ բաներ գրուեցան, բայց մի որոշ հասկացողութիւն չէինք կարողացած կազմել թէ ինչո՞ւ և ի՞նչ կերպով վերջացած էր. հարկաւոր էր շօշափողական փաստեր կամ լուսաբանութիւն, և այդ մեր փնտածը լրացուցին վերոյիշեալ շատ յարգելի անձնաւորութիւնները:

Եւ պէտք է կանխեմ ասել անկողծօրէն, թէ Պր. Ս. Գարութիւնեանի փաստերն աւելի համոզիչ են: Վասն զի, երբ Հ. Ա. Պատուիրակութեան լիազօրները վիճաբանութեան ընթացքին մէջ կը յայտարարեն թէ՛ Հանրապետութեան առաջարկած այս կամ այն պայմաններն իրենց տրուած իրաւասութիւնէն վեր է և ժամանակ կը խնդրեն իրաւասու մարմնի հետ խորհրդակցելու, պատասխան տալ ռաւաշ, դա իրաւաբանական կարգով ասել է՝ թէ բանագնացութեան խզումն, այլ աւելի շուտ՝ ընդմիջումն կամ ինչպէս Պր. Գարութիւնեան կ'ըսէ՝ ընդհատումն: Իսկ լիազօրներու Երևանէն մեկնումը եղած է, գործը փութացնելու համար՝ մինչ թղթակցութիւնը երկուստ ժամանակ պիտի գողնար խոռոած չիւնելուն երկրորդ պարագան այն է որ Հ. Ա. Պատուիրակութեան լիազօրներու մեկնելէն վերջ, Հանրապետութեան Նախագահ և Վարչապետը, Պր. Ալեքսանդր Խատիսեան, նպատակայարմար դատել է, փոխանակ միջնորդի, ինքնին ուղղակի բանակցելի վճեմ. Պր. Նուպարի հետ, մտածելով որ աւելի կտրուկ և շուտ համաձայնութեան կրնան գալ. ուստի գրաւոր առաջար-

կութիւնները կը դրկէ մի քանի գլխաւոր և էական կէտեր նշանակելով, երկրորդականները իբրև հետեանք կը գնային մեծագոյններու ետեւէն: Վսեմ. Պր. Նուպար Հ. Ա. Պատուիրակութեան Նախագահը, կը տեսնուի աւելի իմի փափագող Միութեան զործին, կը փութայ և հետագրով կը պատասխանէ Հանրապետութեան Պարոն Նախագահին և կ'ընդունի այն առաջարկները առանց փոփոխութեան կամ մեկնութեան:

Այս պաշտօնական յարաբերութիւնն և կնճռոտ ու փշոտ խնդրի շուտափոյթ լուծումն, պէտք է թեւադրէ ընթերցողին թէ՛ խզումն տեղի ունեցած չէ, այլ շարունակութիւն և փակումն:

Եթէ Հայկական Հանրապետութեան Պարոն Նախագահի առաջարկած գրաւոր պայմաններն, շնչոք թղթերու կտորուանք չի համարի Պարոն Վրացեանը, պէտք է մեզի հետ ընդունել որ արդէն համաձայնութիւն ու միութիւն Երևանի կառավարութեան և Պարսիւռ Հ. Ա. Պատուիրակութեան միջև de facto կատարուած պրծած բան է: Եւ երբ կը արցունք մեր ծայց այդ պաշտօնական միութեան գործադրութիւնը, Պարոն Վրացեան, զգեախտաբար անմիջեթարական պատասխան մը կու տայ. անօգուտ կը համարի «խզում» բանագնացութեան շարունակութիւնը, որովհետեւ Գեբրգոյն Խորհրդի ճանաչելէն զվերջ Հայ Հանրապետութիւնը իբր պատ և անկախ պետութիւն և իշխանութիւն, ասոր դիրքը և յարաբերութիւնը խախտած է Հ. Ա. Պատուիրակութեան հանդէպ:

Այս պատճառաբանութիւնը համոզիչ չէ, և նա զրկանքի կ'ենթարկէ մեր արեւմտահայ եղբայրները և արհամարհութիւն Հ. Ազգային Պատուիրակութեան և անոր Վսեմ. Նախագահին:

Ըստ Պարոն Վրացեանի յառաջ՝ հաւասար հաւասարի հետ կարելի էր բանագնաց լինել. բայց երբ Հայկական Հանրապետութիւնն հաստատուեցաւ Ազատ և անկախ Պետութիւն և կառավարութիւն, այնուհետեւ Հ. Ա. Պատուիրակութիւնը կամ անապայման պիտի հպատակէր Երևանի կառավարութեան, կամ ինքնին պիտի կազմավորուէր և ցրուէր:

Եթէ ճիշդ է մեր ենթադրութիւնը, մինչև մէկ կէտ համաձայն ենք Պարոն Վրացեանի հետ, թէ այսուհետեւ Հայկական Հանրապետութիւնը իբրև բնիկ Պետութիւն և կառավարութիւն Հայաստանի, պէտք է վայելէ պարտաւարտաճ Հայ ազգի սէնն ու յարգանքը, և հարկաւոր հպատակութիւնը: Առաքելական պատուէրն է հնազանդ լինել ամենայն մարդկեղէն իշխանութեան.

այնուհանդերձ մտածելով Հ. Ա. Պատուիրակու-
թեան հաստատութիւնը, որ նոյնպէս հեղինա-
կութիւն մ'է ճանշցուած Համաձայնական պե-
տութիւններէն, մենք չենք տեսներ առ այժմ
թէ Խնչ բանով Հանրապետութեան դիրքը փո-
խուած է Հ. Ա. Պատուիրակութեան հանդէպ:
Հայի Հայաստանի բնական սահմաններն որո-
շուած չեն, որու մէջ կարեւոր դեր մ'ունի կա-
տարելիք այդ Պատուիրակութիւնը. երկրորդ
շտոնանք որ Հանրապետութեան նախագահի
գրած թուղթը կանաչ սեղանի վրայ կը գտնուի
վսեմ. Պ. Նուպարի հեռագրի հետ ի միասին:
Եւ ինչո՞ւ Հանրապետական վարչութիւնը անհե-
տեանք թողուց Հ. Ա. Պատուիրակութեան հա-
խազահի հեռագրի հաւանութիւնը, երբ զեռ իւր
դիրքը փոխուած չէր:

Ոչ յառաջ եւ ոչ յետոյ երկու հեղինակութեանց
միջեւ խախտած չէ դիրքերը: Ազատ և անկախ
Պետութեան ճանաչումն՝ դիրքերը աւելի եւ կ'ամ-
րացնէր: Երևանի կառավարակութիւնը իբրեւ կեդրոն
պէտք էր իւր շուրջը հաւաքէր բոլոր ազգային
ուժերը, լայն, ուղիղ մտքով Միացեալ Հայաս-
տանի վարչութիւն մը կազմելու համար, հե-
տեապէս ի ձեռին ունենալով վսեմ. Պ. Նուպարի
հեռագրին. անոր պարտականութիւնն էր անմի-
ջապէս և անպայման կերպով հրաւիրելու Հ.
Ա. Պատուիրակութիւնն իւր կազմով մասնակ-
ցելու Խորհրդարանի ընտրութեանց և զբաւելու
միւս բարձրագոյն Պաշտօնութեանց հետ իրեն
յատուկ աթոռը Հայկական դահլիճի մէջ: Ասով
Հանրապետական վարչչեան կը վաստկէին
ամբողջ ազգիս վստահութիւնը և համակրու-
թիւնը և կ'ուժեղացնէին իրենց դիրքը պետա-
կան կազմի մէջ:

Յարգելի հայրենակից, Պարոն Վրացեան,
մտածենք անկողնական մտքով թէ անհատներու
անձական դիրքը և շահերը, կամ նման բաներ,
փայտ, խոտ, եղէգն են, և պէտք է վառուին
Հայրենիքի սիրոյ կրակի մէջ. Հայրենիքը ամէն
բանէ վեր: Հրապարակի վրայ դրուած է Հայ
ազգի գանազան հաստատանքի Միութեան հար-
ցը, միութիւն հաւասար իրաւունքներով ամենքի
համար. « Ի պատիւ զմիմեանք ելանել »:

Ուստի եթէ կարող էք, Պ. Վրացեան, ցոյց
տալով մի գործնական ճանապարհ հեռաւորներուն
զան հաւաքուին Հայկական իշխանութեան կե-
դրոնին շուրջը: Միացեալ ազատ և անկախ Հա-
յաստանը իրաւունք ունի օգտուելու իւրաքանչիւր
զաւակի հոգեկան և բարոյական ուժերէն, որ
կը ծառայեն անոր մեծութեանը և հաստատու-

թեանը: Երևանի կառավարութիւնը արարող և
հիմնադիր եղաւ ազգային ազատութեան, պէտք
է Արարատեան աշխարհի քաջ որդւոց առաքի-
նութեանց այ ժառանգորդը հանդիսանայ, որունը
անմահ անուն թողին Հայ պատմութեան մէջ,
ըստ այնմ. Քաջաց ազգք քաջքն:

Երանի եթէ հինգերորդ Հայաստանը վերականգ-
նող հերոսներուն համար Հայ պատմագիր մը
կարենար գրել. « Արդարադատ և հաւասարասէր
կշիռս ունեւի՞ր յամենայնի, զամենայն ուրուք
կենցաղ՝ մտացն լծակաւ կշռէր, ոչ ընդ լաւագոյնսն
խանդայր, ոչ զնուաստսն արհամարհէր, այլ
ամենեցուն հասարակաց հնարէր՝ զխնամոցն իւրոց
ի վերայ տարածել զգնեստս... Եւ զսահմանս
մերոյ բնակութեանս ընդարձակեալ ի հինսն
մեր հասուցանէ յոգեքս ծայրից բնակութեանց,
եւ ԱՄԵՆԱՅՈՒՆՑ ՈՐ ԱՌ ԻՌԳՎԻՐ ԵՒՆ ԺԱՄՆԱՅՈՒՆՑ
ՆԱԽԱՆՅԵԼԻ, ԵՒ ՅԵՏՆՈՅՍ ԸՂԶԱԼԻ ԻՆՔՆ ԵՒ ԺԱՄՆԱ
ՆԱԿ ԻՌԻ »:

ՄԵՐՈՒ ՇԻՐԱԿԱՑ

Վ Հ Ա Տ Ո Ւ Թ Ի Ն

Ո՞հ, եթէ ես կարենայի՝ առ յաւէտ
Խեղդել այս ձայնը որ կ'ելլէ խորունկէն
Եւ կ'արտասուէ, եւ կ'արտասուէ անդադար.

Ո՞հ, եթէ ես խղճմբտանքիս խորքին մէջ
կարենայի Խեղդել ու բնաւ, բնաւ երբեք
Զըլսել այս ձայնն որ կ'ելլէ խորունկէն...

Վասն զի ան կ'ըսէ ինձ. — Ո՛չ, ո՛չ երբեք,
Գիշերին մէջ է կը քայես, չե՞ս տեսներ...
Ո՞վ կու տայ լոյս ճամբուդ... Նայէ՛, պիտի՛ խնայս.

Մէն մընջիկ ես եւ անդամները ջարդուած,
Քեզ հաւաքող չըկայ. պիտի չըլաղթես,
Գիշերին մէջ է կը քայես՝ չե՞ս տեսներ... —

Մորիկոյն. — Ատա Նեկրի

Թրգ. Հ. ԱՐԱՆՔ Գ. ՂԱԿԻՅԱՆ